Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2009թ.դեկտեմբերի 7 -ի N 1049-Ն հրամանի

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0313 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0313 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության համար մասնագիտացումներ սահմանված չէ:

3. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ» որակավորում:

4. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

1) առկա
2) հեռակա
3) դրսեկության
4) հեռավար

5. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով
   ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 2 տարի
   բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով 3 տարի
2) կրթության հեռակա ձևով
   ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 3 տարի
3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական

մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 2844 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4590 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

ԳԼՈՒԽ 2.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0313 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) դասավանդողներ՝ նախադպրոցական կրթության,
2) դաստիարակ՝ նախադպրոցական հիմնարկության,
3) ուսուցիչ՝ նախադպրոցական հիմնարկության,
4) դաստիարակ՝ մանկապարտեզի,
5) դաստիարակ՝ մանկամսուրի:

8. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) մշակել և լրամշակել ուսուցման ծրագրեր,
2) երեխաների ստեղծագործական երևակայությանը, հետազոտելու, զննելու, սեփական փորձով գիտելիք ձեռք բերելու կարողությունները զարգացնող մեթոդներ կիրառել,
3) ուսումնական նյութեր և պարագաներ ստեղծել սաների գործունեությունը կազմակերպելու համար,
4) երեխաների ֆիզիկական, մտավոր և սոցիալական զարգացումն ապահովող գործունեության ծրագրումն ու իրականացումը, ուսուցման ծրագրերի, նախագծերի մշակումը և լրամշակումը
5) երեխաների՝ հետազոտելու, զննելու, սեփական փորձով գիտելիք ձեռք բերելու կարողությունները զարգացնող մեթոդների կիրառումը,
6) ՏՀՏ միջոցներ օգտագործել իր և սաների գործունեությունը կազմակերպելու համար:

ԳԼՈՒԽ 3.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0313 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,
2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,

3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,
5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

ԳԼՈՒԽ 4.
ՊԱՀԱՆՋՆԵՐ 0313 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
2) տիրապետել հայոց լեզվին,
3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,

2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

ԳԼՈՒԽ 5.
ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0313 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների,

ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. անատոմիա, ֆիզիոլոգիա և բժշկագիտություն,

բ. օտար լեզուների ,

գ. գրականության և բանահյուսության,

դ. մաթեմատիկական կրթության մեթոդիկայի,

ե. գեղարվեստի,

զ. երգ-երաժշտության և պար-ռիթմիկայի,

է. ուսուցման տեխնիկական միջոցների,

ը. համակարգչային:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. մանկավարժության և հոգեբանության,

բ. բնագիտական:

3) Ուսումնական արհեստանոցներ՝

ա. տեխնոլոգիայի:

4) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

ԳԼՈՒԽ 6.
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0313 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,

2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 4 - 09 - 001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է յուրացնել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է ընդհանուր կրթության և անձի զարգացման տարրեր: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի հաղորդակցության համար էական նշանակություն ունեցող ունակություններ, ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով դրսևորվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:
Ուսումնառության արդյունք 2	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին:
Կատարման չափանիշներ	ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը, բ. կատարված հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ, գ. տեղեկատվության առանձնացում. խմբավորումը նպատակային է կատարում, դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:
Ուսումնառության արդյունք 3	Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրմանե ժամանակ օգտագործվող հմտությունները, բ. պարզաբանումներ ստանալու ձգտումը, գ. գրառումներ կատարելը, ամփոփելը, դ. ազատ ձևով ձևակերպում, արտահայտում, պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, ե. ցուցաբերում է համոզելու հստակություն, զ. կատարում է ճիշտ ամփոփում (եզրափակում):
Ուսումնառության արդյունք 4	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ և նկարներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է նախանշում սխեմաների աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները, բ. մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:
Ուսումնառության արդյունք 5	Կատարել փաստաթղթավորում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը ըստ նրանց նշանակության, դիմում, ինքնակենսագրություն(տրված տարբեր

	տեսակի ֆորմատներով), պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ, արձանագրություն, երաշխավորագիր և այլն բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԴԿ 4- 09 – 001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել արտադրական կազմակերպություններում աշխատանքային անվտանգության պահպանման, աշխատանքի պաշտպանության միջո-ցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները, ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը, զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում, հիմնարկներում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները, գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները, դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին բուժօգնություն:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը, բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը, գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ, դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները,

	ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 09-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքեր աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու: կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Չկան
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները, բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
Ուսումնառության արդյունք 2	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները, բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ, գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևերումներ, դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները, բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները, դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին, ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ, զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը, բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:
Ուսումնառության արդյունք 5	Դրսևորել քննադատական մտածողություն:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը, բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ,

	գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:
Ուսումնառության արդյունք 6	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները, բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան), գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները, դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում, ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը, զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները, է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 4 - 09 - 001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլը նախատեսում է տալ տարրական գիտելիքներ MICROSՑFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	WORD ծրագիր(հիմնական տեղեկություններ)
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը, բ. բացել նոր փաստաթուղթ , գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել, դ. տեքստ (առանց ֆորմատավորման), ե. մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), զ. սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ).թվանշաններ, է. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ, ը. կատարել տարրական ուղղումներ տեքստում, թ. փակել փաստաթուղթը. բացել առկա փաստաթուղթը, ժ. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի տարրական ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	ա.պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, բ. նշել բառերը և տեքստային հատվածները, գ. կատարել տողերի հավասարեցում, դ. փոխել միջտողային տարածությունները, ե. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով, զ. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով, է. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից, ը. եղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները, թ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,

	ժ. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը, ժա. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ, ժբ. փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ժգ. ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ժդ. ընտրել թղթի չափերը Paper Size ցուցակի օգնությամբ, ժե. պատճենել տեքստը, ժզ. տեղափոխել տեքստը, ժէ. տողադարձել տեքստը, ժթ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով,
Ուսումնառության արդյունք 3	Փաստաթղթի պահպանում
Կատարման չափանիշներ	ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը, բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը, գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:
Ուսումնառության արդյունք 4	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
Կատարման չափանիշներ	ա. պատրաստել աղյուսակ, բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ, դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ, ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները, զ. փոխել սյունակի լայնությունը մկնիկի օգնությամբ, է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ, ը. փոխել աղյուսակի գծերի գույնը, թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:
Ուսումնառության արդյունք 5	Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
Կատարման չափանիշներ	ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրել կանոնավոր պատկերներ, դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները, ե. տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ, զ. պատճենել, պտտել, շրջել, փոխել չափերը, է, խմբավորել գրաֆիկական օբյեկտները, հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, ը. գծագրել տեքստային բլոկներ, թ. գունավորել գրաֆիկական օբյեկտները, ժ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները, ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:
Ուսումնառության արդյունք 6	Փաստաթղթի տպագրում
Կատարման չափանիշներ	ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները, գ. տպագրել փաստաթուղթը:
Ուսումնառության արդյունք 7	Ինտերնետում աշխատելու իմացություն
Կատարման չափանիշներ	ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,

	բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը, գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը, դ. իմանալ History հրամանի նշանակությունը, ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը, զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը, է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը, ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը, թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից, ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից, ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները, ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա, ժգ. Ճիշտ օգտվելով ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից, գտնել համարժեք ռադիոէլեմենտների փոխարինման, համապատասխան հեռուստատեսային սարքավորումների համալարման ինֆորմացիան, ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն, ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-01
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է կրտսեր դպրոցական երեխաների անատոմիաֆիզիոլոգիական առանձնահատկությունները և հիգիենայի տարրական կանոնները ուսուցանելու միջոցով ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ երեխաների օրգանիզմի աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին՝ երեխաների առողջության պահպանման, հնարավոր հիվանդությունները և առողջության խանգարումները ժամանակին նկատելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ երեխայի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում երեխայի օրգանիզմի աճի առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները, բ. ճիշտ է ներկայացնում երեխայի օրգանիզմի զարգացման առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները, գ.օգտվում է երեխաների ֆիզիկական զարգացման ցուցանիշների տեղեկատվական տիպօրինակներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխաների օրգանիզմի աճի և զարգացման մասին:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ երեխայի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս կմախքի, մկանների տեղն ու կառուցվածքը և գիտի հենաշարժիչ համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, բ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս սիրտ-անոթային համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի սիրտ-անոթային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, գ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս շնչառական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի շնչառական

	համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, դ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս մարսողական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի մարսողական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, ե. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս միզազատական համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի միզազատական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, զ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս ներզատիչ գեղձերի տեղը և գիտի նրանց կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, է. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս աղջիկների և տղաների սեռական օրգանների տեղն ու կառուցվածքը և սեռական համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, ը. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս նյարդային համակարգի տեղն ու կառուցվածքը և գիտի նյարդային համակարգի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները, թ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս վերլուծիչների տեղն ու կառուցվածքը, ժ. մուլյաժի կամ ցուցապաստառի վրա ճիշտ է ցույց տալիս մաշկի կառուցվածքը և մաշկի կառուցվածքի տարիքային առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ երեխայի օրգան-համակարգերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կմախքի և մկանների ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում սիրտ-անոթային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում շնչառական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները , դ. ճիշտ է ներկայացնում մարսողական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում միզազատական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, զ. ճիշտ է ներկայացնում ներզատիչ գեղձերի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, է. ճիշտ է ներկայացնում աղջիկների և տղաների սեռական օրգանների սեռական համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, ը. ճիշտ է ներկայացնում նյարդային համակարգի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, թ. ճիշտ է ներկայացնում վերլուծիչների ֆիզիոլոգիան, ժ. ճիշտ է ներկայացնում մաշկի ֆիզիոլոգիայի տարիքային առանձնահատկությունները, ժա. ճիշտ է բացատրում նյութերի և էներգիայի փոխանակության տարիքային առանձնահատկությունները, ժբ. ճիշտ է բացատրում բարձրագույն նյարդային գործունեության մեխանիզմը երեխաների մոտ:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ մանկական տարածված հիվանդությունները և դրանց հիմնական ախտանիշները
Կատարման չափանիշներ	ա. գիտի մանկական տարածված հիվանդությունների անվանումները և ճիշտ է ներկայացնում այդ հիվանդությունների հիմնական ախտանիշները, բ. գիտի հիվանդությունների առաջացման, տարածման և կանխման ընդհանուր մեխանիզմը :
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ երեխայի առողջության պահպանման հիմնական կանոնները և կարողանալ կիրառել դրանք
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բացատրում հիգիենայի՝ որպես առողջության պահպանման և ամրապնդման գիտության նպատակը, բ. ճիշտ է ներկայացնում երեխայի առողջությունը ամրապնդող և թուլացնող գործոնները, գ. գիտի հենաշարժիչ համակարգի դեֆորմացիայի պատճառները և ճիշտ է ցույց տալիս կեցվածքի պահպանման ձևերը, դ. ճիշտ է ներկայացնում հիգիենիկ ռեժիմի կազմակերպումը վարակիչ հիվանդությունների ժամանակ, ե. ճիշտ է ներկայացնում սննդամթերքի և սննդի ռեժիմի նկատմամբ հիգիենիկ պահանջները, զ. ճիշտ է կիրառում աշխատանքի և հանգստի հերթագայումը ուսուցման գործընթացում, է. ճիշտ է հաշվում երեխայի պուլսը, շնչառության հաճախականությունը, ը. արյան ճնշումը չափելու գործիքով ճիշտ է չափում երեխայի արյան ճնշումը,

	թ. ճիշտ է ներկայացնում երեխայի հագուստին և կոշիկին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ժ. ճիշտ է ներկայացնում մաշկի, մազերի և եղունգների խնամքի հիգիենայի կանոնները, ժա. ճիշտ է ներկայացնում ուսումնական հաստատությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-003
Մոդուլի նպատակը	Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կիմանա հոգեկան գործընթացներից անձի ճանաչողական իմացական և հուզակամային գործընթացները, հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա առողջապահության հիմունքներով» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ուշադրությունը և հիշողությունը որպես հոգեվիճակ և իմացական գործընթաց
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ուշադրությունը որպես իմացական գործընթաց, բ. ճիշտ է ներկայացնում տեսակները, որակները, նախադպրոցականի ուշադրությունը, գ. ճիշտ է ներկայացնում հիշողությունը և նրա ֆիզիոլոգիական մեխանիզմները, դ. ճիշտ է ներկայացնում հիշողության տեսակները, գործընթացները և նախադպրոցականի հիշողությունը:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել զգայությունները և ընկալումները որպես հոգեվիճակ և իմացական գործընթաց
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում զգայությունների և ընկալումների իմացական դերը, բ. ճիշտ է ներկայացնում զգայությունների տեսակները և առանձնահատկությունները, գ. ճիշտ է ներկայացնում ընկալումների տեսակները և առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականների զգայությունները և ընկալումները:
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մտածողությունը, երևակայությունը և խոսքը որպես իմացական գործընթացներ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ճանաչողական իմացական գործունեությունից մտածողությունը, բ. ճիշտ է ներկայացնում մտածողության գործընթացները, տեսակները նախադպրոցական տարիքի երեխայի մոտ, գ. ճիշտ է ներկայացնում երևակայությունը, նրա տեսակները և նախադպրոցականի երևակայության զարգացումը, դ. ճիշտ է ներկայացնում «Երևակայությունն ինքը միտքն է» ձևակերպումը ըստ Ջանի Ռոդարիի, ե. ճիշտ է ներկայացնում խոսքը և հաղորդակցումը որպես անձի անհատական առանձնահատկություն, զ. ճիշտ է ներկայացնում խոսքի տեսակները, նախադպրոցականի խոսքի զարգացումը:
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել հույզը, զգացմունքը և կամքը որպես հուզակամային գործընթաց
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում անձի հուզակամային ոլորտը և նրա դերը, բ. ճիշտ է ներկայացնում հույզերի և զգացմունքների արտաքին դրսևորումները, գ. ճիշտ է ներկայացնում կամային ոլորտի դրսևորումները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել խառնվածքը և բնավորությունը որպես հոգեկան որակ կամ անձի անհատական առանձնահատկություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում խառնվածքի հոգեբանական բնութագիրը և տեսակները, բ. ճիշտ է ներկայացնում բնավորությունը, նրա դրսևորումները և գծերը, գ. ճիշտ է ներկայացնում խառնվածքի և բնավորության ձևավորումը նախադպրոցականների մոտ:
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել ընդունակությունները և դիրքորոշումները որպես անձի անհատական առանձնահատկություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ընդունակությունները, նրա տեսակները և կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում դիրքորոշումների ձևավորման պայմանները, տեսակները և կառուցվածքը,

	գ. ճիշտ է ներկայացնում ընդունակությունները և դիրքորոշումները նախադպրոցականների մոտ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-004
Մոդուլի նպատակը	Դասընթացը յուրացնելուց հետո ուսանողը տիրապետում է ծնված օրվանից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման հիմնական օրինաչափություններին և դաստիարակության առանձնահատկություններին, նախադպրոցական հաստատություններում նախադպրոցականի անձնավորության ձևավորման ու համակողմանի դաստիարակության գործընթացը իրականացնելու համար:
Մոդուլի տևողությունը	126 ԺԱՄ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա առողջապահության հիմունքներով» և Նախադպրոցականի հոգեբանություն» մոդուլներ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ նախադպրոցական մանկավարժության հիմնահարցերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ կրթական համակարգի կառուցվածքը, և ռազմավարությունը, բ. ճիշտ է ներկայացնում մանկավարժական հասկացությունների համակարգը, գ. գտվում է գիտամանկավարժական հետազոտության մեթոդներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխայի անձնավորության ձևավորման և դաստիարակության խնդիրների վերաբերյալ, դ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցական կրթական հաստատության մանկավարժի ընդհանուր նկարագիրը, ե. ճիշտ է ներկայացնում մանկավարժական մտքի զարգացման առանձնահատկությունները, հեղինակների մանկավարժական հայացքների վերլուծությունը:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության բովանդակությունն ու մեթոդիկան
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի ֆիզիկական դաստիարակության խնդիրները՝ կուլտուր-հիգենիկ ունակությունների ձեռք բերումը, երեխայի օրվա ռեժիմի և օրգանիզմի կոփման կազմակերպումը, բ. ճիշտ է ներկայացնում մտավոր դաստիարակության խնդիրները՝ հիմնվելով երեխայի զգայական դաստիարակության և հոգեկան գործընթացների զարգացուման վրա, գ. ճիշտ է ներկայացնում բարոյական դաստիարակության խնդիրները՝ երեխային հաղորդակից դարձնել համամարդկային և սոցիալական արժեքներին, ձևավորել բարոյական վարքագիծ, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքային դաստիարակության խնդիրները՝ երեխայի մեջ աշխատանքի հանդեպ գիտակցված վերաբերմունքի ձևավորում, աշխատանքի արդյունքը գնահատելու կարողություն և աշխատելու պահանջմունք, ե. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակները՝ երեխայի էկոլոգիական գիտակցության, մտածելակերպի և վարքագծի ձևավորում, զ. ճիշտ է ներկայացնում գեղագիտական դաստիարակության խնդիրները՝ երեխաների գեղարվեստական մտածողություն, ստեղծագործական երևակայության զարգացում և գեղագիտական ճաշակի ձևավորում:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ վաղ տարիքի երեխաների զարգացման ու դաստիրակության առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում վաղ տարիքի երեխաների խնամքի կազմակերպումը, բ. ճիշտ է ներկայացնում մանկավարժական այն սկզբունքներն ու մեթոդներն, որոնք նպաստում են երեխայի խոսքի, մտածողության և ինքնուրույնության զարգացմանը, դ. ճիշտ է ներկայացնում երեխաների առարկայական գործունեությունը, որպես համատեղ խաղային գործունեության նախապատրաստման գործընթաց:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ խաղային գործունեության առանձնահատկությունները

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում, բ. ճիշտ է ներկայացնում խաղի առանձնահատկությունները, դրա կառուցվածքային տարրերը, գ. ճիշտ է ներկայացնում խաղի տեսակները, խաղալիքի ընտրությունը տարբեր տարիքային խմբերի համար, դ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի խաղային գործունեություն կազմակերպման և ղեկավարման առանձնահատկությունները՝ երեխաների մեջ ձևավորելով համատեղ գործելու կարողություններ, ապահովելով նրանց համակողմանի զարգացումն ու դաստիարակությունը:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ ընտանիք-մանկապարտեզ-դպրոց համագործակցության նշանակությունն ու կազմակերպման ձևերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականին դպրոցին պատրաստ լինելու աստիճանը՝ կիրառելով հոգեբանամանկավարժական տարբեր մեթոդներ, բ. ճիշտ է ներկայացնում երեխային դպրոցին ինտելեկտուալ և սոցիալանձնային պատրաստության ուղղությամբ մշակված չափանիշները, գ. ճիշտ է ներկայացնում ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության նշանակությունը, աշխատանքի կազմակերպման տարբեր ձևերն ու միջոցները, դ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականին դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելու խնդիրները՝ երեխաների ֆիզիկական պատրաստականության ապահովում, հուզակամային ոլորտի ակտիվացում, ուսումնառության գործընթացի հանդեպ որոշակի վերաբերմունքի մշակում և գիտակցաբար սովորելու ցանկության ստեղծում:
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ մանկավարժական գործընթացի կազմակերպման ու ղեկավարման առանձնահատկությունները նախադպրոցական հաստատություններում
կատարման չափանիշներ	ա. կարողանում է ճիշտ և ստեղծագործաբար օգտվել նախադպրոցական դաստիարակության տարբեր ծրագրերից, բ. ճիշտ է ներկայացնում դաստիարակ-երեխա փոխներգործությունը՝ կարևորելով զարգացնող միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	Դ -04-09-05
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է էկոլոգիական գիտելիքների ուսուցանման միջոցով ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ, դրա հիման վրա ձևավորել էկոլոգիական վարքագիծ, ինչը ուսանողը կօգտագործի իր հետագա մասնագիտական գործունեության մեջ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ էկոլոգիական հիմնական հասկացությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիան որպես բնագիտական, սոցիալական գիտություն և նրա կապը այլ գիտությունների հետ, բ. ճիշտ է բացատրում անկենդան, կենդան և մարդածին գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա, գ. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր էկոլոգիական հիմնախնդիրի էությունը, գ. գիտի ՀՀ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, ՀՀ ,Կարմիր գիրքը և նրանց ընդհանուր բովանդակությունը:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը,

	բ. գիտի էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ, գ. ճիշտ է բացատրում էկոլոգիական դաստիարակության դերը մարդու ամենօրյա գործունեության մեջ:
Ուսումնառության արդյունք 4	Դրսևորել էկոլոգիական վարքագիծ իր ամենօրյա գործունեության մեջ
Կատարման չափանիշներ	Կարողանում է ճիշտ կողմնորոշվել և համապատասխան լուծումներ տալ էկոլոգիական իրավիճակային խնդիրներին:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 0409 – 006
Մոդուլի նպատակը	Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կիմանա բնության դերը նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործում, կտիրապետի երեխաներին բնության հետ ծանոթացնելու, բույսերը և կենդանիներին խնամելու մեթոդներին ու ձևերին:
Մոդուլի տևողությունը	72 ԺԱՄ
Մուտքային պահանջները	Անհրաժեշտ է, որ այս մոդուլին նախորդի «Նախադպրոցական մանկավարժություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ տեղեկություններ կենդանի և անկենդան բնության մասին
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տիեզերքի կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում երկրագնդի ոլորտային կառուցվածքը, գ. ճիշտ է ներկայացնում բնական երևույթները, դ. ճիշտ է ներկայացնում կենդանիների ու բույսերի կառուցվածքային առանձնահատկությունները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ բնության դերն ու նշանակությունը երեխայի կյանքում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բնության դերը երեխաների մոտ շրջապատող աշխարհի մասին իրական գիտելիքներ ու պատկերացումներ ձևավորելու գործում, բ. ճիշտ է ներկայացնում բնության դերը երեխայի ընդունակությունների, հետաքրքրասիրության և դիտունակության զարգացման գործում, գ. կարողանում է հիմնավորել նախադպրոցական տարիքում բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի ձևավորման անհրաժեշտությունը, դ. ճիշտ է ներկայացնում բնության, միջավայրի խնամքի դերը նախադպրոցականի մոտ աշխատասիրություն, պատասխանատվություն, էկոլգիական մշակույթ ձևավորելու գործում, ե. կարողանում է բացատրել բնության նշանակությունը շրջապատում գեղեցիկը տեսնելու և այն պահպանելու ունակության ձևավորման գործում, զ. կարողանում է ներկայացնել բնության մեջ կատարվող աշխատանքի և խաղերի դերը երեխայի ֆիզիկական ճիշտ զարգացման և առողջության ամրապնդման գործում:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ երեխաներին բնության հետ ծանոթացնելու մեթոդները
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է բացատրել խոսքային, զննական և գործնական մեթոդների ընտրությունը կապված երեխաների տարիքային խմբի և տարվա եղանակի հետ, բ. կարողանում է ներկայացնել երեխայի բնագիտական գործունեության (ծառ ու ծաղիկ տնկել, խնամել, սերմեր ցանել, ծիսական բույսեր աճեցնել, բնագիտական տարբեր փորձեր կատարել) դիտումների անցկացումը խմբասենյակում, հողամասում և բնության մեջ, գ. կարողանում է նկարագրել այն խաղերը (դիդակտիկ, ստեղծագործական, շարժական), որոնք հարստացնում են երեխաների գիտելիքները բույսերի, կենդանիների և բնության երևույթների մասին , դ. կարողանում է բացատրել գեղարվեստական ստեղծագործությունների, զրույցների դերը բնության մասին նոր պատկերացումների ձևավորման գործում,

	ե. կարողանում է ներկայացնել բնության, շրջակա միջավայրի պահպանման հետ կապված երեխայի գործունեությունը:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ բնության հետ ծանոթացման աշխատանքների կազմակերպման ձևերը
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ներկայացնել երեխաների բնագիտական գործունեության (բույսերի, կենդանիների խնամք, բնագիտական փորձեր, ճամփորդություններ, շրջակա միջավայրի խնամք և պահպանում…) առանձնահատկությունները տարիքային տարբեր խմբերում, բ. գիտի բնագիտական էքսկուրսիաների նշանակությունը և դրանց կազմակերպման մեթոդիկան, գ. ճիշտ է ներկայացնում բնության երևույթների հետ ծանոթացման մեթոդներն ու հնարքները՝ կապված նաև երեխայի գործունեության մյուս ձևերի հետ (կերպարվեստ, ապլիկացիա, երգ, բանավոր խոսք…), դ. կարողանում է ներկայացնել կենդանիների, բնության երևույթների, տարվա եղանակների, բույսերի աճի, այլ փոփոխությունների դիտարկման, հետազոտման մեթոդները, ե. ճիշտ է ներկայացնում բնագիտական գործունեության միջոցով գիտելիք, կենսափորձ ձեռք բերելու առավելությունները:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ ներկայացնել բնության անկյան կազմակերպումը տարիքային տարբեր խմբերում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բնության անկյան նշանակությունը բնության հետ երեխաների անընդհատ և երկարատև շփման գործում, բ. գիտի տարիքային տարբեր խմբերում բնության անկյան համար բույսերի և կենդանիների ընտրությանը ներկայացվող պահանջները, գ. ճիշտ է ներկայացնում սենյակային բույսերի խնամքի պայմանները՝ հողի պատրաստում, տնկում, ջրում, ջրցանում, տեղափոխում, բազմացում, դ. կարողանում է բացատել նախադպրոցական հաստատությունում կենդանիների և թռչունների խնամքի պայմանները՝ խնամք, կերակրում, վանդակի մաքրում:
Ուսումնառության արդյունք 6	Կարողանալ նկարագրել մանկապարտեզի հողամասի ձևավորումը և կանաչապատումը
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է բացատրել մանկապարտեզի հողամասի ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը տարվա տարբեր եղանակներին, բ. կարողանում է ներկայացնել երեխաների մասնակցությունը հողամասի կանաչապատման աշխատանքներին, գ. կարողանում է բացատրել բանջարանոցային բույսերի ընտրությունը և դրանց խնամքը սերմերի, սածիլների տնկում, ջրում, սնուցում, բերքի և սերմերի հավաքում, դ. կարողանում է բացատրել ծաղկանոցի ձևավորումը, ծաղկաթմբերի պատրաստումը, միամյա, երկամյա, բազմամյա ծաղիկների ու դեկորատիվ բույսերի խնամքի յուրահատկությունները, ե. գիտի ծառերի ու թփերի այն տեսակները, որոնք կարող են աճել մանկապարտեզի հողամասում, զ. գիտի ձմեռող թռչունների անունները, կարողանում է բացատրել, թե ինչպես են թռչունների համար բույն և կերակրասեղան պատրաստում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 0409 – 007
Մոդուլի նպատակը	Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կիմանա զարգացման տարբեր շեղումներ ունեցող երեխաների առանձնահատկությունները, կկարողանա կիրառել նրանց ուսուցման, դաստիարակության և սոցիալականացման մեթոդներն ու միջոցները:
Մոդուլի տևողությունը	36 ԺԱՄ
Մուտքային պահանջները	Անհրաժեշտ է, որ այս մոդուլին նախորդեն «Նախադպրոցական մանկավարժություն», «Նախադպրոցական հոգեբանություն», «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Ուսումնառության արդյունք 1	Իմանալ հատուկ մանկավարժության ուսումնասիրության առարկան, խնդիրները, ճյուղերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության ուսումնասիրման առարկան և խնդիրները, բ. կարողանում է բնութագրել հատուկ մանկավարժության բնագավառները, գ. ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության տեղն ու դերը մանկավարժական գիտության մեջ,
Ուսումնառության արդյունք 2	Կարողանալ բացատրել ,նորմաե և ,շեղումներ նորմայիցե հասկացությունների էությունը, շեղումների տեսությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ,նորմաե և ,շեղումներ նորմայիցե հասկացությունների էությունը, բ. ճիշտ է ներկայացնում անոմալ երեխաների հիմնական խմբերը, գ. ճիշտ է ներկայացնում սահմանափակ հնարավորություններով երեխաների արատների ու շեղումների ծագման պատճառները և դրանց դեմ պայքարելու ուղիները, դ. ճիշտ է ներկայացնում զարգացման շեղումների կենսաբանական, սոցիալական և հոգեբանական տեսությունները, ե. կարողանում է տարբերել առաջնային խանգարումները երկրորդայինխանգարումներից, գիտի երկրորդային խանգարումների հաղթահարման ուղիները:
Ուսումնառության արդյունք 3	Կարողանալ բնութագրել ֆիզիկական զարգացման խանգարումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տեսողության խանգարումներ ունեցող երեխաների զարգացման առանձնահատկությունները, ուսուցման և դաստիարակության մեթոդները, բ. կարողանում է բնութագրել լսողության խանգարումներ ունեցող երեխաներին, նշում է նրանց ուսուցման և դաստիարակության մեթոդները, գ. կարողանում է բնութագրել շարժողական օրգանների արատներ ունեցող երեխաներին, դ. կարողանում է բացատրել երեխայի առողջական վիճակի ազդեցությունը նրա զարգացման վրա:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ բնութագրել հոգեկան զարգացման խանգարումները
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է բնութագրել հոգեկան զարգացման հապաղումով տառապող երեխաներին, բ. կարողանում է ներկայացնել օլիգոֆրեն երեխաների զարգացման առանձնահատկությունները և դաստիարակության խնդիրները, գ. կարողանում է նկարի վրա ցույց տալ խոսքային կառույցի մասերըև նշել հնարավոր թերությունները, դ. կարողանում է բնութագրել խոսքի խանգարումները և դրանց շտկման մեթոդները, ե. կարողանում է բնութագրել հուզակամային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաներին, զ. կարողանում է նկարագրել օժտված երեխաներին, է. կարողանում է բացատրել հոգեկան և կամ ֆիզիկական շեղումների դերը երեխայի սոցիալականացման գործում:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ բնութագրել սոցիալական զարգացման խանգարումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում վարքի սոցիալական նորմերը և դրանց առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում, բ. կարողանում է բնութագրել,դժվարե երեխաներին և ներկայացնել նրանց հետ տարվող աշխատանքի սկզբունքներն ու բովանդակությունը, գ. կարողանում է նկարագրել սահմանային գոտում գտնվող երեխաներին և նշում է շեղումների կանխարգելման ուղիները, դ. գիտի զարգացան շեղումներով երեխաների ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները և կարող է խորհրդատվական օգնություն ցույց տալ ծնողներին:
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ ներառական կրթության նպատակը և նշանակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ներառական կրթության կազմակերպման ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում ներառական կրթության դերը հատուկ կարիքներով երեխաների սոցիալականացման գործում, գ. կարողանում է հիմնավորել ներառական կրթության դերը, հատուկ կարիքներով երեխաների նկատմամբ հասարակական վերաբերմունքի բարելավման գործում:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-08
Մոդուլի նպատակը	ա. ուսանողներին ծանոթացնել հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշներին, այդ նմուշները սաների զարգացման գործընթացում օգտագործելու հմտություններ ձևավորել, բ. զարգացնել ուսանողների ստեղծագործական երևակայությունը, կատարելագործել նրանց լեզվազգացողությունը և լեզվամտածողությունը:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշները և դրանցից անգիր իմանալ այդ նպատակով առաջարկվող նյութերը
Կատարման չափանիշներ	ա. գիտի հայ և համաշխարհային մանկագրության դասականներին և նրանց առավել հայտնի ստեղծագործությունները, անգիր գիտի այդ նպատակով առանձնացված ստեղծագործությունները, բ. ճիշտ է ներկայացնում բանահյուսական ժանրերը և դրանց առանձնահատկությունները, գ. գիտի հայ ժողովրդական բանահյուսության դասական նմուշները, անգիր գիտի այդ նպատակով առանձնացված նյութերը, դ. կարողանում է հայ և համաշխարհային մանկագրության, հայ ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունները տարբեր հնարքներով ներկայացնել լսարանին:
Ուսումնառության արդյունք 2	Կարողանալ մանկական գրականության նմուշներով ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է կազմել առաջադրանքների և անհրաժեշտ մեթոդների կիրառման համակարգ՝ ընտրված ստեղծագործությամբ աշխատելու և այն ամբողջապես յուրացնելու համար, բ. կարողանում է ուսումնական նպատակներով մշակել անհրաժեշտ ստեղծագործությունը, գ. կարողանում է մանկական գրականության յուրացման ընթացքում ինտեգրել գործունեության տարբեր տեսակներ, դ. կարողանում է ստեղծել նոր նյութեր մանկական գրականությամբ աշխատելու արդյունքում:
Ուսումնառության արդյունք 3	Կազմել մանկական ստեղծագործությամբ աշխատելու նախագիծ, իրականացնել և ներկայացնել արդյունքները
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է մանկական ցանկացած ստեղծագործությամբ աշխատելու (ուսուցանելու) նախագիծ կազմել, բ. կարողանում է նախանշել իր աշխատանքի, խնդիրները, քայլերը, իրականացվելիք մեթոդները, գործունեության այլ ձևերի ինտեգրումը, ճամփորդություններ- էքսկուրսիաները, վերջնական արդյունքները, գ. կարողանում է նախանշել աշխատանքի արդյունքների ներկայացման ձևերը:
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքներին և կարողանալ դրանք կիրառել
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքները և ուսման ընթացքում այդ մեթոդներով աշխատանքներ է կատարում, բ. տիրապետում է անգիր սովորեցնելու, գրական ստեղծագործություններով տարբեր խաղերի կազմակերպման, դրանց ստեղծման մեթոդներին ու հնարքներին և կիրառում է դրանք մասնագիտական փորձառության ժամանակ:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ ծեսերի, տոների, այլ միջոցառումների իրականացման աշխատանքային նախագիծ կազմել և իրականացնել

Կատարման չափանիշներ	ա. գիտի ազգային ծեսերը, տոները և ծիսական արարողությունները, ծիսական պարագաները, ծեսերի առանձնահատկությունները, բ. օգտվելով համապատասխան գրականությունից՝ կարողանում է մանկական ծեսի, տոնի, խաղերի իրականացման աշխատանքային նախագիծ կազմել, ծիսակատարության, տոնակատարության սցենարներ գրել և իրականացնել, գ. կարողանում է սցենարի վերածել հեղինակային և բանահյուսական մանկական ստեղծագործությունները, դ. կարողանում է մանկական ստեղծագործությունների հիման վրա բեմադրություններ կազմակերպել, խաղում է իր բեմադրած ներկայացումներում :
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-09
Մոդուլի նպատակը	Մոդուլը մշակվել է ուսանողների խոսքի զարգացման, ստեղծագործական ունակությունների բացահայտման և զարգացման, այդ ունակությունները զարգացնող մեթոդների և հնարքների յուրացման, լեզվազգացողության և լեզվամտածողության, հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակներով
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ պարզ, հակիրճ, գրագետ և ստեղծագործաբար, համապատասխան ոճով կառուցել գրավոր և բանավոր խոսքը՝ ճշտորեն կիրառելով մայրենի լեզվի քերականական կանոնները
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է խոսքը կառուցել լսարանին, խնդրին (թեմային), առարկային իրավիճակին համապատասխան, բ. կարողանում է խոսքը հակիրճ կառուցել՝ առանց ավելորդաբանությունների, գ. ծանոթ է մանկանն ուղղված գրավոր և բանավոր խոսքի լեզվական առանձնահատկություններին, պատմություններ, հեքիաթներ հորինում և տարբեր միջոցներով ներկայացնում դրանք, դ. կարողանում է որևէ իրական դեպքի մասին մանրամասն և հակիրճ պատմել, օրագիր է գրում՝ նկարագրելով օրը, օրվա առանձին դեպքերը, տպավորությունները, տրամադրությունները, կատարած աշխատանքները… ե. կարող է վերլուծական հոդվածներ գրել իր կարդացած կամ իրեն առաջարկված նյութի վերաբերյալ՝ փաստարկված և համոզիչ շարադրելով իր դիտարկումները, կարծիքը, եզրակացությունները:
Ուսումնառության արդյունք 2	Կարողանալ ՏՀՏ կիրառմամբ խմբագրել է իր և ընկերների խոսքը
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է տարբերել լեզվական ճիշտ և սխալ կառույցները. գիտի առավել տարածված լեզվական սխալների ճիշտ տարբերակները, բ. կարողանում է տեղին գործածել մայրենի լեզվի բառապաշարի տարբեր շերտերը, (գրական - խոսակցական - բարբառային, ընդհանուր և սահմանափակ գործածության, մասնագիտական), դարձվածքները, առած-ասացվածքները, թևավոր խոսքերը և լեզվական այլ կառույցները, գ. կարողանում է աշխատել բառարաններով, դ. կարողանում է տեքստ խմբագրել՝ հանելով տեքստը ծանրացնող, տեքստին ոչինչ չտվող լեզվական ավելորդ միավորները կամ դրանք փոխարինելով համարժեք միավորներով:
Ուսումնառության արդյունք 3	Կարողանալ գրավոր և բանավոր փոխադրել ցանկացած տեքստ՝ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով
	ա. կարողանում է վերապատմել ցանկացած տեքստ՝ պահպանելով դրա լեզվական կառույցը և այլ առանձնահատկություններ, բ. կարողանում է պահպանել տեքստի իմաստային, կառուցվածքային և ոճական ամբողջականությունը, գ. կարողանում է տեքստը գրավոր և բանավոր փոխադրել որոշակի առաջադրանքներով՝ առանց մեկնաբանությունների, սեփական մեկնաբանություններով կամ վերլուծություններով, իր անունից, հեղինակի անունից, հերոսներից մեկի կամ նրա անունից, ում

	վերաբերում է տեքստը, տեքստի բովանդակությունից ելնելով՝ տեքստը վերապատմում է, դրականորեն տրամադրված անձի անունից,չեզոք անձի անունից, բացասականորեն տրամադրված անձի անունից, դ. կարողանում է տարբեր տեքստեր վերաշարադրել մանկան տարիքին, ընկալումներին, մտածողությանը համապատասխան լեզվով, ե. տարբեր ուսուցողական նպատակներով ընդարձակում կամ համառոտում է ցանկացած տեքստ:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ տարբեր նպատակներով և ուղղվածության տեքստեր գրել, բանավեճեր և թեմատիկ հավաքներ վարելու նախագծեր կազմել և անցկացնել
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է տարբեր թեմաներով (քննարկմանը, բանավեճին, հանդիպմանը համապատասխան) նյութեր պատրաստել, տարբեր բնագավառներին վերաբերող տեղեկատվական նյութեր հավաքել, դրանք դասակարգել, մշակել, բ. տիրապետում է բանավոր հավաքներ վարելու կուլտուրային (լսել, հարգել ուրիշի կարծիքը, հետևել իր և մյուսների մտքի ընթացքին, հաշվի առնել և մշակել դիմացինի փաստարկները), գ. կարողանում է կիրթ, լսելի խոսք կառուցել և ներկայացնել, տիրապետում է խոսքի հնչերանգին, դ. կարողանում է պաշտոնական և այլ նամակներ, գրություններ, հաշվետվություններ գրել, ե. ճիշտ է գործածում մասնագիտական տերմինները, ձևակերպումները, լեզվական կառույցները:
Ուսումնառության արդյունք 5	Տրամաբանորեն ներկայացնել իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ցանկացած նյութ ներկայացնելիս խոսքը կառուցել իր ասելիքի տրամաբանությունը հաշվի առնելով, բ. կարողանում է իր դատողությունները ներկայացնել փաստարկներով և պատճառաբանություններով՝ խուսափելով ավելորդաբանություններից:
Ուսումնառության արդյունք 6	Կարողանալ թարգմանություններ կատարել
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է թարգմանել տարբեր ոճերի և ժանրերի տեքստեր, բ. կարողանում է գտնել լեզվական կաղապարների համարժեքները իրեն ծանոթ լեզուներում, գ. կարողանում է պահպանել թարգմանվող գործի ռիթմիկ և լեզվական առանձնահատկությունները, դ. կարողանում է օգտվել տարբեր բառարաններից:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-09
Մոդուլի նպատակը	ա. զարգացնել ուսանողների աշխարհընկալումը համաշխարհային գրականության դասական ստեղծագործությունների միջոցով , բ. ուսանողներին հնարավորություն տալ հաղորդակցվել համամարդկային արժեքների հետ, ընդլայնել նրանց աշխարհայացքը, գ. զարգացնել նրանց գեղագիտական ճաշակը, դ. զարգացնել ուսանողների վերլուծական մտածողությունը:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ճանաչել համաշխարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները
Կատարման չափանիշներ	ա. գիտի համախարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները, բ. կարողանում է դասական ստեղծագործությունները ներկայացնել լսարանին՝ հաշվի առնելով լսարանի հետաքրքրությունները, հոգևոր պահանջները, հետաքրքրություն է առաջացնում ստեղծագործության նկատմամբ, գ. կարողանում է ընթերցել կամ արտասանել ընկերների համար:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ գրական ժանրերը, ուղղությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթ լինել դրանց դասական նմուշներին

Կատարման չափանիշներ	ա. գիտի գրական ժանրերը, կարողանում է ներկայացնել գրական ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները, դրանց առավելություններն ու թույլ կողմերը, բ. ճիշտ է ներկայացնում գրական ուղղությունները, դրանցով գրված գրական ստեղծագործությունները, գ. ճիշտ է ներկայացնում ստեղծագործության գաղափարը, կապը իրականության՝ ժամանակի, հասարակարգերի, քաղաքական, տնտեսական իրավիճակների հետ:
Ուսումնառության արդյունք 3	Կարողանալ ներկայացնել և փաստարկել գրական ստեղծագործությունների արժանիքները և թերությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում գրական ստեղծագործության հատկանիշները և կարողանում է գնահատել դրանք, բ. ճիշտ է ներկայացնում գրական ստեղծագործության կառուցվածքը, բովանդակությունը, սյուժեն, դրանց կապը, գ. կարողանում է գնահատել ստեղծագործության լեզուն, հեղինակի գրելաոճը, դ. գիտի պատկերավորման միջոցները, ըստ դրանց կարողանում է մեկնաբանել և գնահատել ստեղծագործությունը, ե. ճիշտ է ներկայացնում գրական ժանրերի առնձնահատկությունները և կարողանում է գնահատել դրանք, զ. կարողանում է կերպար, կերպարի զարգացում ներկայացնել, կերպարներ վերլուծել:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ գրական երկի քննարկում կազմակերպել՝ գործածելով տարբեր մեթոդներ
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է քննարկման համար ընտրել դասական բարձրաժեք ստեղծագործություններ, բ. կարողանում է քննարկման միջոցով բացահայտել, հասկանալի դարձնել հեղինակի ասելիքը՝ ստեղծագործության գաղափարը, գ. կարողանում է քննարկման միջոցով տարբեր մոտեցումներ, կարծիքներ բացահայտել, դ. կարողանում է գրական վերլուծությունը կազմակերպել այնպես, որ արժևորվի ստեղծագործությունն իր արտահայտման ձևի մեջ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹԱՏՐՈՆ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-10
Մոդուլի նպատակը	Ընդլայնել ուսանողների մտահորիզոնը, զարգացնել գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, խոսքի կուլտուրան, ձևավորել և մշակել նախադպրոցական հաստատությունում թատրոնի տարբեր դրսևորումների կիրառման, կերպավորման - կերպարանափոխման հմտություններ: Նախադպրոցական հաստատությունում թատրոնը որպես երեխայի բազմակողմանի զարգացման, կրթման միջոց օգտագործելու կարողության ձևավորում և զարգացում:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Ուսանողները պետք է յուրացրած լինեն «Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն» և «Խոսքի զարգացում» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կարողանալ հստակ ձևակերպել նախադպրոցական հաստատություններում մանկական թատրոնի նպատակն ու խնդիրները
Կատարման չափանիշներ	ա. գիտի նախադպրոցական հաստատություններում մանկական թատրոնի նպատակն ու խնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում երեխաների ,թատերական գործունեությանե արդյունքում լուծվող մանկավարժական, հոգեբանական, իմացական խնդիրները:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ թատերական խաղերի և ներկայացումների առանձնահատկություններն ու դրանց դրսևորման ձևերը

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում թատերական խաղերի, ներկայացումների տեսակներն ու ժանրերը դրանց տարբերություններն ու նմանությունները, բ. կարողանում է գրական և բանահյուսական ստեղծագործություններով շարժուն խաղեր հորինել՝ հաշվի առնելով զարգացնող, շարժուն և խաղարկային խաղերի առանձնայատկությունները, գ. կարողանում է ներկայացնել երեխայի գործունեության մյուս ձևերի (կերպարվեստ, երգ-պար, մարմնակրթություն, տեխնոլոգիա…) ինտեգրումը թատերական տարբեր ներկայացումներ և խաղեր կազմակերպելիս:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ երեխայի գործունեությունը թատերականացնելու հնարքներ և դրանք իրականացնելու մեթոդներ
Կատարման չափանիշներ	ա. գիտի երեխաների թատերական գործունեությունը կազմակերպելու տարբեր մեթոդներ և հնարքներ, բ. կարողանում է թատերական միջոցներով՝ էտյուդ, խաղ, ներկայացումներ, մնջախաղ, կրթական, սոցիալական, հոգեբնական տարբեր խնդիրներ լուծել :
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ սցենարներ գրել և բեմադրել
Կատարման չափանիշներ	ա. ծանոթ `սցենար գրելու տեխնիկային, բ. կարողանում է ցանկացած գրական կամ բանահյուսական նյութ վերածել սցենարի, գ. սցենար գրելիս կարողանում է ստեղծագործական տարբեր հնարքներ կիրառել, դ. կարողանում է փոքր ծավալի նյութը (առած-ասացվածք, առակ, երգ, հանելուկ…) դարձնել խաղարկային, ե. կարողանում է տարբեր ծեսերի, միջոցառումների (նաև՝ սպորտային), խաղերի, տոնակատարությունների սցենարներ գրել:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ էտյուդներ, խաղարկային իրավիճակներ բեմադրել, խաղալ դրանցում (կերպավորել, կերպարանափոխվել)
Կատարման չափանիշներ	ա. կարողանալ բեմադրել իր ստեղծած կամ այլ սցենարներ, բ. կարողանում է տարբեր իրավիճակների վերաբերյալ էտյուդներ ստեղծել և խաղալ կա՛մ համակուրսեցիների, կա՛մ նախադպրոցականների հետ, գ. կարողանում է կերպավորել ցանկացած առարկա, երևույթ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-12
Մոդուլի նպատակը	Մոդուլը մշակվել է ուսանողներին իրական առարկաների տարածական հատկությունների մասին պատկերացումների զարգացման, այդ պատկերացումների ընդհանրացման և վերացարկման միջոցներով, մաթեմատիկական հասկացություններին անցնելու, շոշափելով ճանաչելու, իրական կյանքում իրական գործունեությամբ գիտելիք ձեռք բերելու մեթոդներին ծանոթացնելու, երեխաների հետ աշխատելիս այդ մեթոդները կիրառելու հմտություններ ձևավորելու նպատակով:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային մակարդակ պետք չէ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Միշտ ներկայացնել այն մեթոդները, որոնք կնպաստեն երեխաների մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը իրական գործունեության արդյունքում
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է նկարագրել երեխայի զարգացման միջավայրը, որտեղ կարելի է (ինքնաբուխ կամ ծրագրված) իրականացնել նրա մաթեմատիկական պատկերացումների, մտածողության ձևավորումը՝ լսելով, շոշափելով, զգալով, տեսնելով, փորձից ստացած ինֆորմացիան վերլուծելով և նոր փորձի վերածելով, բ. կարողանում է ներկայացնել մեթոդներ, որոնց կիրառմամբ ուսուցումը կկապվի իրականության, առօրյա խնդիրների, կենցաղի հետ՝ հաշվի առնելով երեխաների ընկալունակությունը, կենսափորձը, իմացական աստիճանը (իրական կրթություն իրական կյանքով), գ. կարողանում ներկայացնել առօրյա գործերի և խաղերի ընթացքում մաթեմատիկայի հետ առնչվող պահերը նպատակային

	օգտագործելու փոքր ծրագրեր, դ. կարողանում է շրջապատում եղած ամեն ինչ (մրգեր, բանջարեղեն, մթերք, խաղալիքներ, գործիքներ, թղթեր, վրձիններ…) օգտագործել համրելու, չափելու-համեմատելու, դասավորելու-շարելու, տեղափոխելու նպատակներով:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ մաթեմատիկական այն հասկացությունները, որոնք ձևավորվում են նախադպրոցական տարիքում
Կատարման չափանիշներ	ա. գիտի նախադպրոցական տարիքում ձևավորվող մաթեմատիկական հասկացությունները՝ (ուշադրության, հիշողության զարգացում, կողմնորոշում, որոշ մեծությունների անկախությունը այլ մեծություններից, առարկաների քանակ, առարկաների քանակների հավասարություն և անհավասարություն, ամբողջ և մաս, համրանք, համեմատություններ…), բ. կարողանում է մեթոդներ, հնարքներ ներկայացնել, ըստ որոնց երեխայի գործունեության ընթացքում իրականացվում են՝ հատկությունների համեմատում, առարկաների խմբավորում, առարկաների խմբին առարկա ավելացներ-պակասեցնել, չափումների կատարում-համեմատում, տարածության և ժամանակի մասին պատկերացումների ձևավորում, առարկաների չափերի, քանակների համեմատում, գ. կարողանում է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ թվաբանական հասկացությունների ձևավորման աշխատանքային նախագծեր կազմել՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնատկությունները, հետաքրքրությունները և ընկալման հնարավորությունները:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ մեթոդներ, հնարքներ, եղանակներ, որոնք ուղղված են մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը և կիրառել դրանք
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մաթեմատիկական հմտությունների ձևավորումը ,շոշափելով ճանաչելուե սկզբունքները, բ. կարողանում է ներկայացնել երեխաների մոտ դիտարկելու, հետազոտելու և եզրակացություններ անելով գիտելիք ձեռք բերելու հմտությունների զարգացման մեթոդները, գ. գիտի մաթեմատիկական հասկացությունների ուսուցման հաջորդականությունը, դ. մաթեմատիկական հասկացությունների ձևավորման համար գործածում է ոչ միայն ձեռքի տակ եղած իրերն ու առարկաները, այլև սաների հետ նորերն է ստեղծում:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ վերլուծել, զարգացնել, կիրառել մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը ուղղված մեթոդները
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է հետազոտել մեթոդը, անհրաժեշտության դեպքում փոփոխել այն, բ. կարողանում է վերլուծել մեթոդը, նշել դրա իրականացման եղանակները, ներկայացնել սպասվելիք արդյունքները, գ. կարողանում է զարգացնել մեթոդը, պարզեցնել կամ բարդացնել, նոր լուծումներ գտնել:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ երեխաների գործունեության բոլոր ձևերի ընթացքում նպաստել մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանն ու զարգացմանը
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է մեթոդներ, որոնք երեխաների գործունեության տարբեր ձևեր իրականացնելիս նպաստում են մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը, բ. կարողանում է ստեղծել մաթեմատիկական հասկացություններին վերաբերող գրանցումների ձևաթղթեր, գ. կարողանում է գրանցել բոլոր տեսակի դիտարկումներն ու փորձերը և մշակել է այդ ընթացքում:
Ուսումնառության արդյունք 6	Իմանալ նաև հորինել խաղեր, որոնք ուղղված են մաթեմատիկական մտածողության զարգացմանը
Կատարման չափանիշներ	ա. գիտի և խաղում է տրամաբանական, զարգացնող խաղեր, բ. կարող է ստեղծել զարգացնող տարբեր խաղեր:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-13
Մոդուլի նպատակը	Մոդուլը մշակվել է ուսանողների գեղարվեստական մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացման, գեղեգիտական բարձր ճաշակ ձևավորելու, նրանց համաշխարհային և հայ կերպարվեստի պատմությանը, կերպարվեստի տեսակներին և ժանրերին ծանոթացնելու, նկարելու և ծեփելու հմտություններ ձևավորելու նպատակներով:

Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հոգեբանություն» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ կերպարվեստի ժանրերը, տեսակները ու առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում կերպարվեստի ժանրերը, ժանրային առանձնահատկությունները, բ. ճիշտ է ներկայացնում կերպարվեստի ժանրային առանձնահատկությունների կապը ժամանակի, հասարակարգի, տնտեսության, հասարակական հարաբերությունների հետ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության հիմնական դրվագները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության հիմնական շրջանները և յուրաքանչյուր շրջանին բնորոշող ժանրերը և այլ առանձնահատկություններ, բ. կարողանում է ներկայացնել յուրաքանչյուր շրջանի ճանաչված արվեստագետներին և նրանց առավելագույն ճանաչված աշխատանքները, գ. ճիշտ է ներկայացնում հայ կերպարվեստի պատմության կարևոր դրվագները, կերպարվեստի դրսևորման ձևերը, դրա հանրահայտ ներկայացուցիչներին, դ. կարողանում է ներկայացնել բարձրավեստ աշխատանքներ, իր կարծիքը դրանց մասին, պատճառաբանել, պաշտպանել իր կարծիքը:
Ուսումնառության արդյունք 3	Տիրապետել նկարելու և ծեփելու որոշ հմտությունների, տեխնիկայի և տեխնոլոգիայի
Կատարման չափանիշներ	ա. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է գունատեսության հիմունքները, բ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է հեռանկարի հիմունքները, գ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է լույս ու ստվերի հիմունքները, դ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է ծավալի հիմունքները, ե. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է կոմպոզիցիայի հիմունքները, զ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է համաչափության հիմունքները, է. կարողանում է նկարել տարբեր նյութերով, ը. կարողանում է ծեփել տարբեր նյութերով:
Ուսումնառության արդյունք 4	Կարողանալ նկարել ցանկացած գրական և բանահյուսական ստեղծագործություն՝ ընտրելով նկարելու համապատասխան տեխնիկա
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է նկարել գրական և բանահյուսական ցանկացած մանկական ստեղծագործություն իր հնարավորությունների և պատկերացումների սահմաններում, բ. կարողանում է գույներով ներկայացնել տարբեր երևույթներ, զգացումներ և զգացմունքներ, հասկացություններ, կերպարներ… գ. կարողանում է մանկական ստեղծագործությունները, ծեսերը ներկայացնել կերպարվեստի տարբեր ժանրերով կամ տեխնիկայով (կոլաժ, հագուստի դիզայն, ներկայացման ձևավորում, ծիսական և տոնական այլ առարկաների պատրաստում)՝ օգտագործելով զանազան նյութեր, առարկաներ (հատկապես՝ թափոններ), դ. կարողանում է հեքիաթների էլեկտրոնային տարբերակներ ստեղծել սեփական ձևավորումներով, ե. կարողանում է ընկերների, մասնագիտական պրակտիկայի ընթացքում նաև երեխաների հետ, տարբեր տեխնիկաներ կիրառելով, խմբային նկարներ նկարել, կոլաժներ պատրաստել:
Ուսումնառության արդյունք 5	Կարողանալ երեխայի գեղարվեստական գործունեությունը կիրառել ուսուցողական տարբեր խնդիրներ լուծելու նպատակներով

Կատարման չափանիշներ	ա. կարողանում է տառաճանաչման նպատակով տառերի նկարային կերպարներ ստեղծել՝ կերպավորել տառերը, բ. կարողանում է նկարային առաջադրանքներ ստեղծել թվաբանական տարբեր հասկացություններով աշխատելու համար՝ հաշիվ, համեմատում, հավասարություն և այլն, գ. կարողանում է առաջադրանքներ ստեղծել, որոնց լուծումը նկարելու հետ է կապված, դ. կարողանում է էլեկտրոնային բացիկներ և այլ գեղարվեստական նյութեր ստեղծել:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-14
Մոդուլի նպատակը	Մոդուլը մշակվել է նկարչություն և ծեփ դասավանդելու մեթոդիկայի վերաբերյալ ուսանողի մոտ տեսական գիտելիքներ ձևավորելու, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ ձևավորելու և զարգացնելու նպատակով:
Մոդուլի տևողությունը	36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Կերպարվեստ» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ երեխայի գեղարվեստական գործունեության խնդիրները
Կատարման չափանիշներ	ա. կարողանում է ներկայացնել երեխաների ստեղծագործական երևակայությունը զարգացնող մեթոդներ և հնարքներ բ. կարողանում է ներկայացնել երեխաների տեսողական հիշողությունը, տարածական մտածողությունը զարգացնող մեթոդներ, հնարքներ, խաղեր, գ. կարողանում է ներկայացնել երեխաների մոտ իրականության երևույթների ու առարկաների նկատմամբ վերաբերմունք մշակելու մեթոդներ և աշխատանքներ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ տարբեր մեթոդներ, որոնք կիրառելի են գեղարվեստական գործունեության միջոցով ուսուցողական տարբեր խնդիրներ լուծելու համար
Կատարման չափանիշներ	ա. գիտի նախադպրոցական տարիքի երեխայի աշխարհաճանաչողության, աշխարհընկալման, իրականության, շրջապատող միջավայրի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, նրա տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, բ. տիրապետում է հնարքների և մեթոդների, որոնք կերպարվեստի միջոցով զարգացնում են երեխայի ստեղծագործական երևակայությունը, գ. գիտի մեթոդներ և հնարքներ, որոնք երեխաների գործունեության ընթացքում նպաստում են միջառարկայական կապերի իրականացմանը:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ մեթոդներ, որոնք կերպարվեստի միջոցով զարգացնեն երեխայի պատկերավոր մտածողությունը
Կատարման չափանիշներ	Ճիշտ է ներկայացնում այն մեթոդները, որոնք զարգացնում են երեխայի պատկերավոր մտածողությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌԱՐՎԵՍՏ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-15
Մոդուլի նպատակը	Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կարողանում է աշխատել թղթով, ստվարաթղթով, բնական և արհեստական նյութերով, թափոններով, գործվածքով և այդ հմտությունները կիրառել նախադպրոցական հաստատություններում երեխաների գործունեությունը կազմակերպելիս:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը մուտքային մակարդակ չի պահանջում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Աշխատել թղթով, ստվարաթղթով և այլ նյութերով

Կատարման չափանիշներ	ա. տիրապետում է ձեռքի գործիքներն ու հարմարանքները օգտագործելու եղանակներին, թուղթը խնայողաբար օգտագործելուն և անվտանգության կանոններին, բ. աշխատում է թղթով և պատրաստում է ծալումներով աշխատանքներ, գ. գծանշում, չափում, կտրում, հյուսում է թուղթը, դ. ճիշտ է տեղադրում և սոսնձում ապլիկացիոն աշխատանքների դետալների հաջորդականությունը, ե. մակակտրում է ստվարաթուղթը և ստանում է ծավալային շինվածքներ, զ. կարողանում է ձոռքի տակ եղած նյութերով աշխատել, է. կարողանում է զանազան թափոններով անհրաժեշտ առարկաներ կամ ուսումնական նյութ պատրաստել:
Ուսումնառության արդյունք 2	Կրողանում է բնական և արհեստական նյութերով և թափոններով մշակել և կոլաժներ, տարբեր կերպարներ պատրաստել,
Կատարման չափանիշներ	ա. մշակում է բնական և արհեստական նյութերը ստեղծելով նոր իրեր, բ. օգտագործում է գործիքները, միացնում է դետալները, գ. ձեռքի տակ եղած նյութերը , թափոնները օգտագործում է նպատակային և գտնում է ինքնատիպ լուծումներ, դ. պատրաստում է կոլաժ, խճանկար, ե. զանազան նյութերով կարողանում է տարբեր չափերի, ոճերի տիկնիկներ պատրաստել մանկական ներկայացումների համար, զ. կարողանում է տարբեր նյութերով առօրյա օգտագործման իրեր պատրաստել (աղբաման, ջրաման, ծաղկաման, արկղեր, պայուսակներ…), է. կարողանում է ստեղծագործական մոտեցում ցուցաբերել թափոնների նկատմամբ՝ հին իրերը (հովանոց, գլխարկ, պայուսակ, հողաթափեր, զգեստներ, խոհանոցային պարագաներ…) նոր տեսքով և գործածությամբ ներկայացնելով, ը. կարողանում է տարբեր նյութերից ուսումնական-դիդակտիկ նյութեր պատրաստել:
Ուսումնառության արդյունք 3	Աշխատել գործվածքով, թելերով, բնական և արհեստական նյութերով ՝ ազգային տոներն արտացոլող ձեռարվեստի նմուշներ պատրաստելու համար
Կատարման չափանիշներ	ա. գիտի ծիսական առարկաների պատրաստման տարբեր տեխնոլոգիաներ, բ. ընտրում է գործվածք ըստ նշանակության, գ. կենցաղային իրերը ձևավորելիս կիրառում է պարզագույն կարատեսակներ, դ. թելերից, տարբեր թփոններից պատրաստում է ազգային ծեսերին բնորոշ ձեռարվեստի նմուշներ, ե. օգտագործում է լեկալներ, միացնում փափուկ խաղալիքների դետալները, կարողանում է տարբեր տեխնոլոգիաներով տիկնիկներ և այլ խաղալիքներ պատրաստել:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ 04-09-16
Մոդուլի նպատակը	Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կիմանա նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, երեխաների ֆիզիկական գործունեության ձևերը, միջոցներն ու մեթոդները և այն կկիրառի մասնագիտական գործունեության ընթացքում `նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի, օրգանիզմի ամրապնդման և առողջության պահպանման նպատակով:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիաառողջապահության հիմունքներով», «Նախադպրոցական մանկավարժություն» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի կատարողականը գնահատվելու է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները և միջոցները

Կատարման չափանիշներ	ա. բնութագրում է նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները (առողջապահական, կրթական, դաստիարակչական) և միջոցները, բ. ներկայացնում է նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության կապը բազմակողմանի դաստիարակության համակարգի մյուս գործոնների (մտավոր, աշխատանքային, գեղագիտական և բարոյական) հետ, գ. գիտի նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հիմնական և օժանդակ միջոցները , ներկայացնում է երեխայի օրգանիզմի վրա նրանց ներգործության ուղիները, դ. ներկայացնում է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ֆիզիկական որակների (ճարպկություն, ճկունություն, դիմացկունություն, արագաշարժություն և ուժ) ձևավորման ուղիները, ե. կարողանում է մշակել տարբեր որակների ձևավորման համար անհրաժեշտ վարժությունների համալիրներ:
Ուսումնառության արդյունք 2	Իմանալ և ցուցադրել նախադպրոցական տարիքի երեխաների օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները նախադպրոցական հաստատություններում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի ֆիզիկական զարգացման առանձնահատկություններն ու չափորոշիչները, բ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի ֆիզիկական աճի դիտարկումների և չափագրումների մեթոդները, գ. կարողանում է երեխայի ֆիզիկական աճի, զարգացման հսկման և չափագրման, գրանցման սանդղակ (ձևաթղթեր կամ էլեկտրոնային աղյուսակներ) ստեղծել, դ. կարողանում է ներկայացնել այն միջավայրը, որն ապահովում է նախադպրոցականի ֆիզիկական գործունեությունը ողջ օրը և ցանկացած պահի, ե. բնութագրում է նախադպրոցական տարիքի երեխաների օրգանիզմի կոփման միջոցները (օդային, արևային, ջրային), զ. ըստ առաջադրանքի կազմում է կոփման միջոցառումների գրաֆիկ տարբեր տարիքի երեխաների համար, է. ներկայացնում է երեխայի ճիշտ կեցվածքի և կեցվածքի շեղումների արտաքին բնորոշ գծերը, ը. տիրապետում է երեխայի մոտ կեցվածքի շեղման և հարթաթաթության հայտնաբերման ձևերին և կարողանում է կազմել դրանց կանխման համար հատուկ վարժությունների համալիր:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ և ցուցադրել ֆիզիկական վարժությունների տեսակները և և դրանց կիրառման մեթոդները երեխայի գործունեության ընթացքում
Կատարման չափանիշներ	ա. դասակարգում է ֆիզիկական վարժությունները ըստ ենթաբաժինների, բ. ներկայացնում և ցուցադրում է ֆիզիկական վարժությունների կատարման տեխնիկան, գ. ներկայացնում և ցուցադրում է ֆիզիկական շարժումների ուսուցման էտապները (նախնական ուսուցում, խորացված ուսուցում, ամրապնդում և կատարելագործում), դ. ներկայացնում և գործնականորեն կիրառում է ֆիզիկական վարժությունների ուսուցման խոսքային և գործնական մեթոդների տեսակները, ե. բնութագրում է մարմնամարզական վարժությունների տեսակները՝շարումներ - շարափոխումներ, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ, հիմնական շարժումներ, պարային շարժումներ, զ. ըստ առաջադրանքի ցուցադրում է դարձումների տեսակները, խտացման և բացազատման ձևերը, է. բացատրում և ցուցադրում է ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների և ելման դրությունների տեսակները, ը. կազմում է ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների համալիր՝ պահպանելով ճիշտ գրառման կանոնները, թ. ներկայացնում և ցուցադրում է նախադպրոցական տարիքում ուսուցանվող հիմնական շարժումների տեսակները (քայլք վազք, ցատկ, մագլցում, սողանցում, հավասարակշռություն, գլորում, նետում, բռնում):
Ուսումնառության արդյունք 4	Իմանալ և ցուցադրել շարժախաղերի , մարզախաղերի և սպորտային վարժությունների ուսուցման մեթոդիկան նախադպրոցական հաստատություններում
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում և ցուցադրում է նախադպրոցական տարիքի երեխաների շարժախաղերի տեսակները ըստ բովանդակության և ըստ շարժողականության,

	բ. ճիշտ է ներկայացնում շարժախաղերի կազմակերպմանը առաջադրվող մանկավարժական պահանջները, գ. ճիշտ է ներկայացնում և ցուցադրում նախադպրոցական տարիքի համար նախատեսվող մարզախաղերի տեսակները և դրանց տարրերի ուսուցման մեթոդները, դ. ըստ առաջադրանքի կազմում է խաղաքարտ տարբեր շարժախաղերի համար, ե. ճիշտ է ներկայացնում և ցուցադրում է սպորտային վարժությունների ընդհանուր բնութագիրը և դրանց տարրերի ուսուցման մեթոդիկան, զ. գիտի ազգային մանկական խաղեր և դրանց իրականացման մեթոդները:
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ֆիզիկական դաստիարակության աշխատանքի ձևերը նախադպրոցական հաստատություններում
Կատարման չափանիշներ	ա. ներկայացնում է նախավարժանքի կառուցվածքը, նշանակությունը և անցկացման մեթոդիկան, բ. ըստ առաջադրանքի կարողանում է կազմել նախավարժանքի համալիր տարբեր տարիքի երեխաների համար՝ պահպանելով վարժությունների ընտրությանը ներկայացվող մանակավարժական պահանջները, գ. կարողանում է բնութագրել և ցուցադրել երեխաների ֆիզիկական գործունեության տեսակները և իրականացման մեթոդիկան, դ. կարողանում է հիմնավորել ֆիզիկական գործունեության տարբեր մասերի համար ընտրված նյութերի նպատակայնությունը, ե. ճիշտ է կատարում ֆիզիկական գործունեության նախապատրաստական քայլերի հերթականությունը, զ. գիտի և ցուցադրում է նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվ հանգստի կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքների ձևերը մանկապարտեզում, է. կարողանում է կազմել մարզական տոնի, ժամանցի սցենար և հեռավոր զբոսանքի ծրագիր՝ կատարելով երթուղու քարտեզագրում
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԵՐԳ , ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ»	
Մոդուլի դասիչը	ՆԿԴ - 4-09-13
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ներդաշնակ հոգևոր զարգացում, երաժշտական ունակությունների, երաժշտական լսողության, երաժշտական մտածողության զարգացում, ազգային երաժշտական մշակույթի յուրացում, երաժշտության ունկնդրման, երաժշտական ստեղծագործությունների ընկալման, վերլուծության և գնահատման ունակությունների ձևավորում:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային մակարդակ չի պահանջվում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի նմուշները, որոնք ստեղծված են երեխաների համար կամ հասկանալի, հասանելի են նրանց
Կատարման չափանիշներ	ա. գիտի երեխաների համար ստեղծված ազգային և կոմպոզիտորական բարձրարվեստ երաժշտական ստեղծագործությունները, որոնք նախատեսված են 2-10 տարեկանների համար, բ. ճիշտ է ներկայացնում հայ ժողովրդական բանահյուսական նմուշների միջոցով (խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր) երեխաների ռիթմի զարգացողությունը, երաժշտական ընկալունակությունը զարգացնող մեթոդներն և հնարքները:
Ուսումնառության արդյունք 2	Գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները
Կատարման չափանիշներ	ա. գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները և դրանց հեղինակներին, բ. գիտի դասական երաժշտության ունկնդրման կազմակերպման հնարքներ, գ.կարողանում է կազմակերպել դասական երաժշտության ունկնդրում՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից:
Ուսումնառության արդյունք 3	Իմանալ երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ

Կատար ման չափանիշներ	ա. գիտի տարբեր թեմատիկ երգերի ուսուցման և կատարման առանձնահատկությունները, բ. կարողանում է երգ-երաժշտությունը համատեղել երեխաների գործունեության բոլոր ձևերի հետ, գ. ճիշտ է կազմակերպում երգի ուսուցումը՝ նպաստելով երեխաների ստեղծագործական ունակությունների, երևակայության, երաժշտական մտածողության զարգացմանը, դ. կարողանում է պարերգի ուսուցումը վերածել ներկայացման, ե. կարողանում է երաժշտությունը գույներով արտահայտել, զ. կարողանում է մեկնաբանել լսած երաժշտությունը, ներկայացնել իր զգացողությունները:
Ուսումնառության արդյունք 4	Կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր, վարժանքներ
Կատարման չափանիշներ	ա. գիտի երժշտական խաղերի առանձնահատկությունները և խնդիրները, բ. կարողանում է երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր կազմակերպել, գ. կարողանում է երաժշտական տարբեր վարժությունների միջոցով զարգացնել երեխաների ռիթմի զգացողությունը, դ. երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով կարողանում է ռիթմիկ ձայներ ստանալ:
Ուսումնառության արդյունք 5	Իմանալ մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով նպաստել սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը
Կատարման չափանիշներ	ա. գիտի մեթոդներ և հնարքներ, որոնց կիրառմամբ խոսքը դառնում են ավելի երաժշտական, վերածվում ասերգի կամ երգի, բ. գիտի մայրենի լեզվի ճիշտ խոսելաձևև ու արտասանական առանձնահատկությունները, գ. երեխաների երաժշտական և խոսքային գործունեությունը կազմակերպելիս կարողանում է ճիշտ կիրառել արտասանական առանձնահատկությունը, դ. ճիշտ է կազմակերպում երգ-երաժշտության ունկնդրումը, նպաստելով երեխայի լսելու, տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը:

Աղյուսակ 3

Միջին մասնագիտական կրթության 0313 «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության օրինակելի ուսումնական պլան

N	Դասընթացներ, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ				
1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2	Տնտեսագիտության հիմունքներ		72	48	1
3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		72	48	1
4	Իրավունքի հիմունքներ		54	36	1
5	Պատմություն		72	48	1
6	Ռուսաց լեզու		108	72	1
7	Օտար լեզու		108	72	2
8	Ֆիզիկական կուլտուրա			122	1,2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**594**	**518**	
	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**27**	**18**	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		81	54	1
2	Հաղորդակցություն		54	36	2
3	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
4	Համակարգչային օպերատորության հիմունքները		81	54	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**270**	**180**	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով		162	108	1
2	Նախադպրոցական հոգեբանություն		162	108	1,2
3	Նախադպրոցական մանկավարժություն		189	126	1
4	Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ		54	36	1
5	Բնագիտություն և բնության հետ ծանոթացման մեթոդիկա		108	72	2
6	Հատուկ մանկավարժություն		81	54	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**756**	**504**	
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1	Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն		162	108	1,2
2	Խոսքի զարգացում		162	108	1,2
3	Գրականություն		162	108	2
4	Թատրոն		81	54	2
5	Մաթեմատիկական պատկերացումների ձևավորում		135	90	2
6	Կերպարվեստ		81	54	2
7	Կերպարվեստի ուսուցման մեթոդիկա		54	36	1
8	Ձեռարվեստ		108	72	2
9	Նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության մեթոդիկա		162	108	1,2
10	Երգ-երաժշտություն և ուսուցման մեթոդիկա		162	108	1,2
11	Պար-ռիթմիկա		54	36	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**1323**	**882**	
	ԸՆՏՐՈՎԻ		**108**	**72**	
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		**33**	**22**	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**61**	**3111**	**2196**	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**200**	**200**	
	ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				
	ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ	**18**			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	**4**			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	**2**			
	ԸՆԴԱՄԵՆԸ	**104**			